ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշումների մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

12/01/2023 - 27/01/2023

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 2 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 2 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

2 կողմ

10 դեմ

Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից

27/01/2023

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 670-Ն և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1566-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	«Արազա» ԲՀԿ 12.01.2023 17:03:18	ԻՆՉՈՒ՞ ԵՔ ԲԱՐԴԱՑՆՈՒՄ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՈՒ ՆՊԱՍՏԱՌՈՒՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ: Յուրաքանչյուր թոշակառու, կամ նպաստառու իր գումարը ստանալու համար առաջարկված բանկերի ցանկից հնարավորություն ունի ընտրել առավել հարմար բանկը մշտական սպասարկում ստանալու ակնկալիքով: Առաջարկվող փոփոխության մեջ ոտնահարվում են շահառուների շահերը, ինչն անընդունելի է:	Առաջարկվող փոփոխությունը վերաբերում է այն դեպքերին, երբ 2023 թվականի վճարման ցուցակ ձևավորելիս Ազգային օպերատորի միջոցով կենսաթոշակը ստացող կենսաթոշակառուն չի ընտրել իր նախընտրելի բանկը: Այս դեպքում է, որ համակարգը ինքնաշխատ եղանակով կենսաթոշակառուի փոխարեն ընտրելու է բանկը:	

			Բացի այդ, հարկ է նկատի ունենալ, որ ցանկացած ժամանակ քաղաքացին կարող է փոխել կենսաթոշակ վճարող բանկը:	
2	Կարեն Աբրահամյան 12.01.2023 16:02:02	Առաջարկում եմ բացառությունների մեջ 75 տարեկաը լրացած, 1-ին ու 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանցից բացի նաև 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց ներառել:	Առաջարկությունը նախագծի կարգավորման առարկա չէ, քանի որ նշված պայմանը սահմանված է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով:	